Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաք Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է: 1968 թվականին Սովետական Միությունում մեծ հանդիսավորությամբ տոնվեց նրա հիմնադրման 2750-ամյակը, այդ հոբելյանը նշվեց նաև արտասահմանում:

Երևանը տեղադրված է Արարատյան հարթավայրում, Հրազդան գետի երկու ափերին: Հյուսիս-արևելքից քաղաքի համայնապատկերի բաղկացուցիչ մասն է կազմում քառագագաթ Արագածը, իսկ հարավից՝ հավերժական ձյունով պատված բիբլիական Արարատը: Քաղաքը զարգանում է բնակլիմայական յուրօրինակ պայմաններում՝ նրա սահմաններում տարածքի բարձրության տարբերությունը կազմում է մոտ կես կիլոմետր, հյուսիսային թաղամասերում հասնելով 1300 մ ծովի մակերեսից բարձր: Դա է պատճառը, որ Երևանի բնակելի շրջաններում միաժամանակ չեն սկսվում գարունը կամ աշունը, ծառերի ծաղկումը կամ տերևաթափը:

Երևանի բլուրների՝ Շենգավիթի, Ծիծեռնակաբերդի, Կարմիր-բերդի վրա կյանքը 6000 տարվա պատմություն ունի: Երևանի նախորդը՝ Շենգավիթի բնակատեղին, սկզբնավորվել է մ. թ. ա. IV հազարամյակում Հրազդանի ձախ ափին և գոյատևել է համարյա երկու հազարամյակ: Սակայն քաղաքի ստեղծման նախնական կորիզը եղել է ուրարտական Էրեբունի ամրոցն Արին-բերդ բլրի վրա: Այնտեղ գտնված սեպագրերով բազալտե սալը ծանուցում է մ. թ. ա.

Երևանի համայնապատկերը

782 թ. ուրարտական Արգիշտի թագավորի կողմից Էրեբունիի հիմնադրման մասին: Քաղաքի «Երևան» անունը «Էրեբունի» բառի ձևափոխությունն է: Այսպիսով, լինելով Հռոմի և Բաբելոնի ժամանակակիցը, ի տարբերություն մյուս հնագույն քաղաքների, Էրեբունի-Երևանն ունի ոչ թե առասպելական, այլ վավերական «ծննդյան վկայագիր»:

Արին-բերդի գագաթին գտնվում է 1968 թ. վերակառուցված Էրեբունիի միջնաբերդը, որ բաղկացած է պալատից, պաշտամունքային, բնակելի, տնտեսական շենքերից և պաշտպանական կառույցներից: Որմնահեցերով ուժեղացված պարիսպների առաջ գտնվում է վեցսյունանի փայտածածկ սրահը, որը նախատեսված է եղել Արգիշտի թագավորի այցելուներին դիմավորելու համար: Ամրոցի գլխավոր մուտքը տանում է դեպի ընդարձակ հրապարակը, ուր տեղադրված են պալատը՝ երկու ներքին բակերով և մեծ դահլիճներով, ինչպես նաև Սուսի ոչ մեծ տաճարը: Ընդունելության դահլիճները զարդարված են ճոխ որմնանկարներով: Ամենամեծ դահլիճը (480 քառ. մ մակերեսով), որն ունի ընդերկայնական առանցքով հինգ այուն, հատկացվել է հանդիսավոր ընդունելությունների համար: Էրեբունիում շինարարական աշխատանքները շարունակվել են նաև Ուրարտուի անկումից հետո, Երվանդունիների վաղ հայկական թագավորության օրոք: Էրեբունու, ինչպես և ուրարտական մյուս քաղաքների շենքերը հիմք են ծառայել Հայաստանի ճարտարապետության հետագա զարգացման համար:

Երևանի տարածքում, Կարմիր-բլրի վրա, տեղադրված է մյուս ուրարտական ամրոցը՝ Թեյշեբաինին (մ. թ. ա. VII դար), որի պեղումները չափազանց արժեքավոր հնագիտական նյութ տվեցին:

Երևանը հետագա հազարամյակների ընթացքում հասել է ծաղկման, ունեցել է անկման շրջաններ, սակայն կյանքն այստեղ երբեք չի ընդհատվել: Այդ մասին են վկայում ոչ միայն պատմիչների տեղեկությունները, այլև քաղաքի տարբեր ժամանակաշրջաններին պատկանող բազմաթիվ ճարտարապետական հուշարձանները:

Երևանի հյուսիսային ծայրամասում գտնվող Ավանի տաճարը (584 — 602 թթ.) ունի արտաքին ուղղանկյուն պատերի մեջ ներգրծ-

Էրեբունի ամրոցի (մ. թ. ա. 782 թ.) ընդհանուր տեսքը

Ավանի կաթողիկեն (584 — 602) հարավ-արևմուտքից

ված քառախորան հորինվածք՝ միջանկյալ խորշերով և կենտրոնական տարածության հետ կապվող անկյունային չորս կլոր սենյակներով: Եկեղեցին պսակվում է խոշոր գմբեթով (այժմ ավերված): Կովկասի համանման կառույցների շարքում Ավանի տաճարը հնագույնն է և բարձր գեղարվեստական արժանիքներ ունեցող մի շարք հուշարձանների համար նախօրինակ է ծառայել:

Երևանի կենտրոնում պահպանվել է Կաթողիկե (XIII դար) կոչվող եկեղեցին՝ ոչ մեծ կենտրոնագմբեթ մի շենք, որի պատերին

փորագրված են քաղաքի պատմությանը վերաբերող կարևոր արձանագրություններ:

Ուշ միջնադարում իր անառիկությամբ հռչակվել էր Երևանի բերդը (կառուցված XVI, վերակառուցված՝ XVII դարում), ատամնավոր երկշարք պարիսպներով:

Երևանի համարյա բոլոր հնագույն եկեղեցիները ավերվել են 1679 թ. ուժեղ երկրաշարժի ժամանակ. դա է պատճառը, որ քաղաքի

«Արմենիա» հյուրանոցը

մեզ հասած ճարտարապետական հուշարձանների մեծ մասը պատկանում է XVII — XVIII դարերին: Դրանց շարքում առանձնանում է Զորավորը (1691 — 1705 թթ.), երկու զույգ մույթերով մի բազիլիկա, որն արևմուտքից ունի զանգակատնով ավարտվող եռակամար բաց սրահ: Քանաքեռի ս. Հակոբ և ս. Աստվածածին (երկուսն էլ 1695 թ.) և Կոնդի ս. Հովհաննես (1710 թ.) եկեղեցիները նույնպես ունեն եռանավ բազիլիկայի հորինվածք, երկու զույգ մույթերով: Ս. Սարգիս գմբեթավոր եկեղեցին, շինված XIX դարում, հիմնովին վերակառուցվել է մեր դարի 70-ական թվականներին:

Շինարարական արվեստի առումով արժեքավոր են Հրազդանի և Գետառի կամուրջները: Հրազդանի մինչև օրս գործող կամուրջը կառուցվել է XII — XIII դարերում, վերակառուցվել՝ XVII դարի վերջին: Կարմիր երկթռիչք կամուրջը, որը կառուցված է սրբատաշ կարմիր տուֆով, միջնադարյան Հայաստանի ամենախոշոր կամուրջներից է. սրա ընդհանուր երկարությունը հասնում է 80 մ: Գետառի վրայի փոքր միակամար կամուրջը կառուցված է 1664 թ.:

1828 թ. Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ նպաստեց Երևանի հատակագծի բարելավմանը, նոր տիպի հասարակական շենքերի կառուցմանը: Քաղաքի կենտրոնական մասը վերակառուցվեց և ստացավ կանոնավոր հատակագիծ, գոյացան նոր փողոցներ՝ վարչական շենքերով և քաղաքատիպ բնակելի տներով:

Սակայն հինավուրց քաղաքի իսկական ծաղկումը սկսվեց 1920 թվականից՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Անցած տասնամյակների ընթացքում Երևանը դարձավ արդյունաբերական, մշակութային, գիտական խոշոր կենտրոն: Բնակչության աճի տեմպով շատ քիչ քաղաքներ կարող են համեմատվել Երևանի հետ՝ 1920 թ. համեմատ նրա բնակչությունը աճել է 30 անգամ և այժմ քաղաքն ունի ավելի քան մեկ միլիոն բնակիչ: Ստեղծվեցին հոյակապ ճարտարապետական համալիրներ, հասարակական շենքեր, բնակելի շրջաններ՝ բնակլիմայական, սոցիալական և կենցաղային նոր պայմաններին համապատասխան շենքերով: 30-ական թվականներին կառուցվեցին կառավարական տունը և օպերային թատրոնը (հեղինակ՝ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյան), որոնք բո-

Մատենադարան

վանդակ սովետական ճարտարապետության լավագույն ստեղծագործություններից են: 50-ական թվականներին ձևավորվեց Լենինի անվան հրապարակի հիասքանչ համալիրը, որտեղ կառավարական տնից բացի, կառուցվեցին մինիստրությունների շենքը (Ս. Սաֆարյանի, Վ. Արևշատյանի մասնակցությամբ), «Արմենիա» հյուրանոցը և միությունների տունը (Մ. Գրիգորյան, Է. Սարապյան), վերակառուցվեց Կուլտուրայի տունը (Հայաստանի պետական պատմական թանգարանի և պատկերասրահի շենքը): Ազգային ճարտարապետության ավանդների կիրառումով ստեղծվեցին Մատենադարանի և Հայաստանի կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի (Մ. Գրիգորյան), «Արարատ» տրեստի գինու մառանների (Ռ. Իսրայելյան), Կոնյակի գործարանի (Հ. Մարգարյան), կենտրոնական ծածկած շուկայի (Գ. Աղաբաբյան, Ս. Առաքելյան), Գիտությունների ակադեմիայի (Ս. Սաֆարյան) շենքերը: Ժամանակակից հայ ճարտարապետության աչքի ընկնող նվաճումներն են նաև Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի (Ռ. Ալավերդյան, Ս. Բուրխաջյան, Գ. Մնացականյան), երիտասարդության պալատի (Ա. Թարխանյան, Հ. Պողոսյան, Ս. Խաչիկյան), «Հրազդան» մարզադաշտի (Կ. Հակոբյան, Գ. Մուշեղյան, Է. Թոսունյան), Կամերային երաժշտության համերգասրահի (Ս. Քյուրքչյան) շենքերը: Արվեստի առաջնակարգ նմուշներ են Երևանի քանդակագործական կոթողները՝ Վ. Ի. Լենինի հուշարձանը (քանդ. Ս. Մերկուրով, ճարտարապետներ Լ. Վարդանով և Ն. Փարեմուզովա), «Մայր-Հայաստանի» (ճարտ. Ռ. Իսրայելյան, քանդ. Ա. Հարությունյան), հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի (Գ. Զուբարյան), Սասունցի Դավթի (Ե. Քոչար), ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի (քանդ. Ա. Հովսեփյան, ճարտ. Ս. Պետրոսյան) արձանները:

Ժամանակակից հայ ճարտարապետական մտքի ինքնատիպ արտահայտություններ են Ծիծեռնակաբերդում վեր խոյացող Եղեռնի հուշարձանը (Ա. Թարխանյան, Ս. Քալաշյան) և Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հուշապուրը Քանաքեռի բարձունքում (Զ. Թորոսյան, Ս. Գուրզադյան):

Սասունցի Դավթի արձանը

Մետրոյի «Լենինի հրապարակ» կայարանը

«Զվարթնոց» օդանավակայանը

Վերջին քսանամյակում Երևանում մեծ հաջողություններ են ձեռք բերված զանգվածային բնակելի շինարարության ասպարեզում: Ստեղծվել են նոր բնակելի շրջաններ՝ Աջափնյակը, Զեյթունը, Նոր-Նորքը, յուրաքանչյուրը մոտ հարյուրհազարանոց բնակչությամբ:

Իր տարածքով և բնակչությամբ շարունակաբար աճող Երևանի տարբեր թաղամասերը միմյանց կապելու համար կառուցվում է ժամանակակից հաղորդակցության ամենակատարյալ միջոցը՝ մետրոպոլիտենը:

Երևանը շարունակում է բուռն զարգանալ և վերածնված Հայաստանի մայրաքաղաքը մոտ ապագայում կդառնա էլ ավելի շքեղ ու հրապուրիչ:

ԳՄԴ 85.113(2Հ)1
Հ 368

ՄՈՒՐԱԴ ՄԱՐԳԱՐԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ

Երևան «Հայաստան» 1987

МУРАД МАРГАРОВИЧ АСРАТЯН
ЕРЕВАН

(На армянском языке)
Ереван «Айастан» 1987г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Լ. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Ց. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Հ $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԿ

ՎՖ 01153: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5177: Գինը՝ 20 կոպ.:
Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,7 պայմ. տպ. մամ., 0,6 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան — 9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.